Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2022-2023 թվականների հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված «Հայկական կինոյի հիմնադրման 100-ամյակ», «Հրանտ Շահինյան-100» արծաթե հուշադրամների դիմերեսի և դարձերեսի էսքիզները հաստատելու մասին

2022-08-23

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհուրդ

Որոշում թիվ 145 Ա
23.08.2022

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2022-2023 թվականների հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված «Հայկական կինոյի հիմնադրման 100-ամյակ», «Հրանտ Շահինյան-100» արծաթե հուշադրամների դիմերեսի և դարձերեսի էսքիզները հաստատելու մասին

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» և «է» կետերը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Ո ր ո շ ու մ է .

Հաստատել «Հայկական կինոյի հիմնադրման 100-ամյակ», «Հրանտ Շահինյան-100» արծաթե հուշադրամների դիմերեսի և դարձերեսի էսքիզները՝ համաձայն սույն որոշման Հավելվածի:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով:

Հավելված

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան

2022 թ. օգոստոսի 29, ք. Երևան